Հավելված 7
«ԳՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/2»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N 201701477

ք. Գյումրի «05» 02 2018 թ.

Շիրակի մարզի Գյումրու <<Հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ ի դեմս տնօրենի Ն.Բաղդասարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Հակոբյան Կարապետյան» ՍՊԸ ի դեմս ընկերության տնօրեն Ս. Կարապետյանի, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են _____ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են _____ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:
2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:
2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝
2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:
2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:
2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:
2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝
2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:
2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 12211900 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[3]:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[4]:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

---

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[4] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք բերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[5]

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
<<Գյումրու Հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ	***Հակոբյան Կարապետյան ՍՊԸ***
ք.Գյումրի, Ղարսի խճ 2ա	ք.Գյումրի Ռուսթավելի 22
ՀՎՀՀ 05507677	ՀՎՀՀ 05537512
<<Հայէկոնոմբանկ >>	<< Հայէկոնոմբանկ >> Գյումրու մ/ճ
Հ/Հ 163128117682	Հ/Հ163128019631
Էլ փոստ՝ hakgyumri@mail.ru	
Տնօրեն՝ Ն.Բաղդասարյան	Տնօրեն՝ Ս.Կարապետյան

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

[5] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարան	
ՀՀ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը **
2	15511200/302	կաթ	Իգիթ ՍՊԸ Հայաստան	Պաստերացված կովի կաթ 3 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-210Т: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	լիտր	440	572000	1300	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ-25.12.2018թ
3	15863100/302	թեյ	Օրիմի ՍՊԸ ՀՀ	Բայխաթեյ սև չափածրարված և առանց, խոշոր տերևներով, հատիկավորված և մանր: Միանգամյա օգտագործման թեյի տոպրակները տեսակավորված են 2, 2,5 և 3 գ փաթեթներով: "Փունջ", բարձրորակ և I տեսակների: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	5200	218400	42	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ-25.12.2018թ
5	15313000/302	կարտոֆիլ I կիսամյակ	ՀՀ	Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5	կգ	240	360000	1500	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ

				%, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:						
6	15618000/302	բլղուր	Ավանդ ական ՀՀ	Ձավար ցորենի I, II և III տեսակի, ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա *կոտրատմամբ, ցորենի* հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից: Անվտանգությունը՝ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	440	198000	450	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
7	03221115/301	կանաչ լոբի	ՀՀ	Սովարական և ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	550	55000	100	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ

9	15623200/302	սպիտակ կածավար	Ավանդական ՀՀ	Պատրաստված է կոշտ և փափուկ ցորենից: Սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Ժամկետի մեջ:	կգ	370	136900	370	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
10	15831000/302	շաքարավազ սպիտակ	Ախուրյանի շաքարի գործարան ՀՀ	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 50%-ից ոչ պակաս: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	420	504000	1200	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
11	15551600/302	մածուն, կովի կաթից	Իգիթ ՍՊԸ ՀՀ	Թարմ կովի կաթից, յուղայնությունը 3%-ից ոչ պակաս, թթվայնությունը 65-1000Տ,: անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	480	528000	1100	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	

12	03211400/302	գարի		Գարեձավար Ստացված գարու թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստ-ված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված,"Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	420	126000	300		
14	15331167/301	կանաչի , խառը	ՀՀ	Կանաչի չորցրած տարբեր տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	3900	78000	20	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
15	15872310/301	դափնետեր–, չորացրած	ՀՀ	Չորացրած դափնետերև, խոնավության զանգվածային մասը տերևում՝ 12 %-ից ոչ ավելի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	2200	2200	1	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
16	15841400/301	առանց քաղցրի հավելման կակաոյի փոշի	Գրանդ Քենդի	Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝	կգ	6600	33000	5	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ

				չոր նյութի 0.75%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 30,0%: ՀՍՏ 280-2007: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:						
18	03221124/301	վարունգ	ՀՀ	Սովարական և ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	260	65000	250	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
19	03221110/301	գազար	ՀՀ	Սովարական և ընտիր տեսակի: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	280	112000	400	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
20	03221120/301	Բիբար կանաչ	ՀՀ		կգ	460	69000	150	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
21	03222128/301	խնձոր	ՀՀ	Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	450	90000	200	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
22	15331165/302	սխտոր, գլուխ	ՀՀ	Սովորական տեսակի, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ	կգ	1800	48600	27	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ

				կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի"և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի						
23	15617000/302	ցորենա ձավար	ՀՀ	Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստ-ված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված,"Հացահ ատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	320	144000	450	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
25	03221100/301	բազուկ	ՀՀ	Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին	կգ	220	88000	400	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ

				կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%:						
26	15313000/303	Կարտոֆիլ II կիսամյակ	ՀՀ	Վաղահաս և ուշահաս, I տեսակի, չցրտահարված, առանց վնասվածքների, կլոր ձվաձև 4 սմ, 5%, երկարացված 3,5սմ, 5 %, կլոր ձվաձև (4-ից 5) սմ 20%, երկարացված (4-ից 4,5) սմ 20%, կլոր ձվաձև (5-ից 6սմ) 55%, երկարացված (5-ից 5,5) սմ 55%, կլոր ձվաձև (6-ից 7) սմ 20%, երկարացված (6-ից 6,5) սմ 20%: Տեսականու մաքրությունը՝ 90 %-ից ոչ պակաս, փաթեթավորումը՝ առանց չափածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	190	950000	5000	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
28	15619000/301	հաճարաձավար	ՀՀ	հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստ-ված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված,"Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-	կգ	380	114000	300	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ

				րդ հոդվածի:						
29	03221410/301	կաղամբ մաքրած	<<	Թարմ գլուխկաղամբ՝ մանրածախ առևտրի ցանց և հանրային սննդի օբյեկտներ մատակարարման և իրացման համար: Թարմ գլուխկաղամբն ըստ հասունացման ժամկետների ստորաբաժանվում է հետևյալ տեսակների, վաղահաս, միջահաս և ուշահաս: Արտաքինտեսքը՝ գլուխներըթարմ, ամբողջական, մաքուր,առողջ, լիովին ձևավորված, առանցհիվանդությունների, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով. ձևով ու համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Կաղամբի գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն խիտ կամ քիչ խիտ, բայց ոչ փխրուն, վաղահաս կաղամբը՝ տարբեր աստիճանի փխրունությամբ: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակերևույթը ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևները: Վաղահաս կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն վարդաձև տերևաբույլերից և օգտագործման համար ոչ պիտանի տերևներից: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչավելի: Կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս՝ 0.8 կգ, վաղահաս կաղամբինը՝ 0.3- 0.4 կգ: Ճաքած և 3 սմ-ից ոչ ավելի խորությամբ, մեխանիկական վնասվածքներով կաղամբի գլուխների զանգվածային մասը՝ 5%-ից ոչ ավելի: 3 սմ-ից ավելի խորությամբ մեխանիկական	կգ	180	234000	1300	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ

				վնասվածքներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված՝ միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայություն չի թույլատրվում: Չի թույլատրվում նշահատված գլուխներով և կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀօրենքի 8-րդ հոդվածի:						
30	15331152/301	սիսեռ, ամբողջական	ՀՀ	սիսեռ հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված,"Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	1200	432000	360	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
31	15512000/302	թթվասեր, տեղական	Իգիթ ՍՊԸ ՀՀ	Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 ՕՏ, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ	կգ	1300	292500	225	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ

				կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %						
32	24321440/322	քացախ աթթու	ՀՀ	Խնձորի քացախ 9%, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	լիտր	250	8000	32	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
33	15331161/302	սոխ, գլուխ	ՀՀ	Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, ընտիր տեսակի, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍ 27166-86, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված, Թարմ պտուղբանջարեղենի տեխնիկական կանոնակարգի և Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	320	275200	860	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
34	15871256/302	Պղպեղ կարմիր աղացած	ՀՀ	Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	կգ	2800	215600	77	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
35	15530000/30	կարագ,	Ֆոնտեր	Սերուցքային,	կգ	4900	1372000	280	Ք.Գյումրի	01.01.2018թ

	2	սերուցքային	ա լիմիտետ Նոր զելանդիա	յուղայնությունը՝71,5-82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ 200-250 գ կամ 20-25 կգ գործարանային փաթեթներով: Անվտանգությունը և մակնշումը՝ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված					Ղարսի խճ 2ա	- 25.12.2018թ
36	15331174/302	պոմիդորի խյուս	Արտաշատի պահածոյի գործարան ՀՀ	Բարձր կամ առաջին տեսակների, ապակե կամ մետաղյա տարաներով, փաթեթավորումը՝ մինչև 10 դմ3 տարողությամբ: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	950	80750	85	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
37	15331168/301	սմբուկ	ՀՀ	Սմբուկ թարմ: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	240	60000	250	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
38	03221122/301	դդմիկներ	ՀՀ	Թարմ դդմիկ;միջին չափի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	220	44000	200	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
39	03222113/301	չամիչ	Իզյում ՍՊԸ ՌԴ	Գործարանային և ոչ գործարանային մշակման, չափածրարված, մինրև 20°C ջերմաստիճանում 70%-ից ոչ ավել խոնավության	կգ	1500	60000	40	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ

				պայմաններում:Սանիտ արահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Ժամկետի մեջ:						
41	15842110/301	կոնֆետ շոկոլադ ապատ	Ֆանտազիա Գրանտ Քենդի ՀՀ	Ըստ սահմանված բնութագրի: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	2450	49000	20	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
42	15872600/301	կերակրի սոդա	ՀՀ	Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի 0.75%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 30,0%: ՀՍ 280-2007: Անվտանգությունը և մակնշումը N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	տուփ	280	11200	40	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
43	15200000/302	մշակված – պահածոյացված ձուկ	Կիլկա Ֆորտունա Կրիմ ՌԴ	մշակված – պահածոյացված ձուկ	կգ	1550	403000	260	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
45	03221121/301	պոմիդոր	ՀՀ	Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	կգ	280	42000	150	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
46	03311112/301	ձուկ	Քասե Սասհոդ ԱՄՆ	Սառեցված մաքրած առանց գլխի ձուկ	կգ	1450	87000	60	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
47	15112150/302	հավի մսեղիք, պաղեցրած, տեղական, ամբողջական	Արաքս թռչնաֆաբրիկա ՀՀ	Հավ մաքրած, պաղեցրած, տեղական, ամբողջական առանց գլխի և տոտիկների	կգ	1580	726800	460	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ

48	15331167/302	կանաչի , խառը	<<	Կանաչի տարբեր տեսակի, թարմ, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և 'Սննդամթերքի անվտանգության մասին' << օրենքի 9-րդ հոդվածի	կապ	250	61250	245	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
49	15872700/301	կերակրի աղ (քարաղ)	Ավանի աղի կոմբինատ <<	Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀUS 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:	կգ	260	39000	150	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
51	15541100/303	պանիր, լոռի	Պանիր Լոռի Իգիթ ՍՊԸ ՀՀ	Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ << կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջ-ների տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» << օրենքի 8-րդ հոդվածի:	կգ	2600	1560000	600	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	
52	15872400/302	աղ, կերակրի, մանր	Ավանի աղի կոմբինատ <<	Կերակրի աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀUS 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս:	կգ	220	30800	140	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
53	03211300/302	բրինձ	<<	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-ից մինչև 4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13%-ից մինչև 15%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ << կառ. 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված , Հացահատիկին, դրա արտադրմանը,	կգ	460	425500	925	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ

				պահմանը, վերամշակմանը և օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի.						
54	03142510/302	ձու, 01 կարգ	Արաքս թրջնաֆաբրիկա ՀՀ	Ձու սեղանի կամ դիետիկ, բարձր որակի,(խոշոր չափսերի) տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	հատ	75	487500	6500	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
55	15331151/302	լոբի, հատիկ ավոր	ՀՀ	Լոբի գունավոր, միագույն, գունավոր ցայտուն, չոր՝ խոնավությունը 15 %-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ (15,1-18,0) %: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50 %:	կգ	990	722700	730	Ք.Գյումրի Ղարսի խճ 2ա	01.01.2018թ - 25.12.2018թ
							12211900			

Ծանոթություն

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

- *Ապրանքի մատակարարում մինչև պահեստ և բեռնաթափումն իրականացնում է Մատակարարը:*
- *Մատակարարումը պետք է իրականացվի ժամանակին, պատշաճ և որակով*

- *Ապրանքների գնման դեպքում պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը*[6]
- *Ապրանքների մեկական օրինակները մինչև մատակարարումը՝ հաղթողը պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ*
- *Ապրանքները պետք է լինեն չօգտագործված*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՄԱՏԱԿԱՐԱՐ
<<Գյումրու Հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ	***Հակոբյան Կարապետյան ՍՊԸ***
ք.Գյումրի, Ղարսի խճ 2ա	ք.Գյումրի Ռուսթավելի 22
ՀՎՀՀ 05507677	ՀՎՀՀ 05537512
<<Հայէկոնոմբանկ >>	<< Հայէկոնոմբանկ >> Գյումրու մ/ճ
Հ/Հ 163128117682	Հ/Հ163128019631
Էլ փոստ՝ hakgyumri@mail.ru	
Տնօրեն՝ Ն.Բաղդասարյան	Տնօրեն՝ Ս.Կարապետյան

6 Եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար